ԱՆՑՈՐԳԸ ԵՒ ԻՐ ՃԱՄՐՃԱՆ

(ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՅՈՒՇԱՏԵՏՐԻՑ)

Գրեց՝ ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

ԹԱՂՈՒԱԾ ԱՅԳԻՆ

Շուկայի հրապարակից մինչեւ Զանգուլի կամուրջը կառքը վազում է աշխուժ, քարերի վրայ ցատկելով, կուտակուած ցեխերը անիւների տակից ժայթքեցնելով, խարխուլ տան նման երերալով: Կամուրջին հասաւ թէ չէ, թափը կոտրում է, դանդաղում, մտածկոտ դոմէշի նման տատանւում ու զառիվերի վրայ անքում, սող գալիս:

Եւ Էջմիածնի ճանապարհը ձիերի սմբակների տակ համբիչի գլորակների նման վայր է ընկնում դնդալով:

Այգիները խոր մրափի մէջ են: Հողի տակ ծածկուած որթենիները շնչում են դէպի վար, իրենց արմատների շուրջը բոլորուած: Երբեմն մի թռչուն է անցնում, թեւերը օդի վրայ փռուած, դանդաղ, մտածկոտ, աննշմարելի շարժումով:

Արարատեան դաշտի լայնատարած նայուածքի մէջ մարդ կորչում է: Միտքը մաղբլցում է դէպի ներս, թեւերը ծալում, աչքերը փակում:

Հայաստանում ամէն քայլի տակ դետինը հեծկլտում է, ու ամէն մի հեծկլտանքի հետ, էութեանս մէջ, դարերով դիզուած լռութիւնները խուլօրէն շարժւում են:

Հայը մի տեսակ անդունդ է, որի մէջ եթէ քար նետես՝ արձագանգները կը խօսակցին եւ անտեսանելի աշխարհները կը կենդանանան:

* * *

Կառապանի մտրակը ոլորւում է ճանապարհի հետ: Կառքը թեքւում է աջ ու ձախ: Այգիների պատերը ներս են քաշւում: Մի գիւղ կուչ է գալիս, ու կառապանը վիզը ծռած երգում է: Մեր երգերը տխուր են, որովհետեւ երբ մենք պարում ենք՝ մեռելները ծափ են տալիս, եւ լեռներից իջնող հովերի տակ ոգիները ծփում են: Մեր կեանքը ցցուել է անցեալի, խո՛ր անցեալի մշանջենական ալիքի կատարին, առագաստը պատռած նաւակի նման, եւ դաշտ ու լեռ՝ ինչպէս տխա Արարատը՝ մեզ են գալիս անսասդ հորիզոնի վրայ:

Դաշտանկարի հետ միասին օրօր եմ գալիս: Այնպէս, ինչպէս հրդեհը բաց դրքի առջեւ: Հազար մտքեր են այցելում: Տարակուսանքներ, յիշատակներ, հակասական զգացումների պայքար:

Երեւանը մգլոտած հայի ետեւից է վազում: Մարսողական իր փիլիսոփայութեան ատ-ժան բառաբանում ամէն ինչ բացայայտ է, ու տիեզերքը ոսկոր է շունների բերանում: Վա՛յ թէ ձեռք տաս: Այստեղ լռութիւն է, թաղուած այգի, սպասում:

* * *

Մեր սերունդը կանգնել է պատմութեան ճեղքուած ճանապարհի առջեւ: Ուղղութիւնները խաչաձեւուել են: Դարը սեւ դուռ է բաց արել, արիւնոտ, եւ մենք ներս ենք մտել պաշարուած մի երկիր: Մենք մեզ պաշարել ենք ու թաւալ ենք գալիս խայթող պատասխանատուութիւնների մէջ:

Պատմական դէպքերի հողմապտոյտի առջեւ փոշիների ուղղութիւններն ենք արձանագրում, օրէնքներ որոնում, թաւալգլոր օրերի ետեւից վազում, ու վերաղառնում տուն այրուած կոպերով, տրտնջող աչքերով:

Բուն կեանքը անակնկալների մի շարք է, որովհետեւ նա իր էութեան մէջ ստեղծագործական է, ուստի փոփոխական, արկածախնդիր, արտառոց: Պատմութեան մէջ կարեւորը այն է՝ ինչ որ պատմութիւն չէ, այլ ներքին, էական, հոգեկան այն յարակցութիւնը, լռութիւնների այն անդունդը, որի մէջ նետուած քարը արձագանգում է:

Դէպքերը պտտում են տրամախոհական խմացականութեան մակերեսի վրայ, որոշ վեր-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան